

պաւորութիւնը, որուն ենթարկուած էր մասնաւոր Միւնիայ վարդապետարանը, գրեթէ անջնջելի գրոշմ մը թողուց գրական լեզուին վրայ:

ԺԳ. դարէն վերջ, երբ արդէն ռամկո-րհեր սկսած էր այլ եւ այլ գրուածքներու համար գործածուիլ, մասնաւոր կիրիկեան սահմաններում, վերին Հայաստանի մէջ եւրեցան պատմագիրներ կամ եկեղեցական-

ները, ոոնք համեմատաբար պարզ, բայց ինկած ու տափակ գրաբարի մը կիրառու-թեամբ գոհացան, և ժԴ. դարու կէսէն վերջն ալ լատին հայագէտներ նոր շրջան մը բացին՝ այս անգամ ալ ուրիշ ճամբով մը պղտորելու հայերէն գրաբարը, ինչպէս պիտի տեսնենք յետոյ:

Ե. Ե. Դ.

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

Ն Ա Խ Ն Ա Կ Ա Ն Ք Ր Ի Ս Տ Ո Ն Է Ա Կ Ա Ն Կ Ե Ա Ն Ք Ը

ԺԴ. Մատիրոսուքան պատմագիրը

Սկսեալ 64 թուականէն մինչև 314 տա-րին, երկու հարիւր յիսուն տարիներու ըն-թացքին, մարտիրոսութեան սպառնալիքը սաւառնեցաւ քրիստոնեաներուն վրայ. գրեթէ նոյնքան հալածանքի տարիներ եւ դան, որքան՝ խաղաղութեան տարիներ, աւելի կամ նուազ ընմիջումներով: Այսպէս նահատակութիւնը նուիրագործումն եղաւ հաւատքին, սերմը անոր. ու այէտք էր հաւատացեալները պատրաստել ատոր, որպէս փառաւոր փորձի մը, որուն իւրաքանչիւր ոք կրնար ենթարկուած զտնուիլ: Եկեղեցին իր քաջալերութիւնները կը շը-ուայէր անոնց, որ կը խոստովանէին Յի-սուս Քրիստոսը. ան կը դատապարտէր ու առ նուազն ժամանակի մը համար իր ծո-ցէն կը հեռացնէր զանոնք, որ բանտար-կութեան թշուառութիւնէն կամ շարչա-րանքի սոսկումէն ընկճուած՝ կը կորսնցը-նէին իրենց կեանքը տալու պատիւը: Հե-թանոսները ամէն ջանք ի գործ կը դնէին ձեռք անցընելու համար հաւատարացու-թիւն մը, որուն համար մեծապէս կ'ու-րախանային, ինչպէս ամենողժուար յաղ-թանակի մը առթիւ: Բաց ի գերութիւնէ ու տառապանքէ, անոնք կոչ կ'ընէին բնու-թեան զգացումին, խոստովանողին աչքին առջև կը բերէին իր կիներ, իր գեռատի

զաւակները, իր ծերունի ծնողքը արտա-սուալից: Հաւատարացութիւններ յառաջ կու գային զժրախտաբար. 250 ին, խաղա-ղութեան երկար շրջանէ մը յետոյ, անհա-մար եղան անոնք. և հետեանքները այս թերացումին անոնց կողմէ, որոնք կոչուե-ցան «անկեալներ» (lapsi), շատ շարիքներու ծնունդ պիտի տային: Մարդիկ կը աես-նէին զանոնք, որ հալածանքի հոչակու-մէն սկսեալ, տօնակոն զգեստներով, մեհ-եաններուն և կապիտոններուն մէջ կը նե-տուէին, գինեծօնք ու խունկ մատուցա-նելու և ձեռք բերելու հաւատարացու-թեան վկայադիրը, որ ազատ կեանք կ'ա-պահովէր իրենց: Տեսնուած են սկզբուն-քով մարտիրոսութեան դատապարտութիւ-նը հաստատող հերետիկոսներ և անընդու-նելի զանազանութիւնները շատ վարպե-տութեամբ ընդունելու տրամադիր հուա-տացեալներ: Յաջս անոնց, քիչ կարեո-րութիւն ունէր ըսել. «Կ'երկրպագեմ Ամե-նարարձրեալին, կամ թէ կ'երկրպագեմ Արամազդին. ներքին զգացումը կ'ընէր ա-մէն ինչ»: Եկեղեցին պարտաւոր էր պայ-քարելու այս ջլատիչ քարոզութեանց դէմ. նա ըրաւ զայն ամենայն կորովով զոր կը պարտադրէ մեծ վտանգ մը:

Քրիստոսի ախոյեանը պարտաւոր էր

ենթարկուիլ տքնութիւններու և պահքի, որոնք իր մարմինը յոգնութեան կը վարձեցնէին ու կը պատրաստէին զինքը կրելու տառապանքները, առանց տկարանալու: Անոնց մասին խօսուած պահուն, մրցական փոխարկութիւններ կը զործածուին շարունակ: Ախոյեաններ են անոնք, մարտիկներ. անոնց խոստացուած է մըրցանակը. անոնք կը շահին արմատներն ու պատքի: Լիտնի ու Կարքեղոնի մէջ սա ոճով կը խօսուի. հաւատացեալը պարտի զինուած ըլլալ, պատրաստ պատերազմելու:

Անսահման է պարզաբ նահատակին. սուրբ զոհերու համար վայրկենարար կը բացուի երկինքը. հրեշտակները անոնց հովիները կը փոխադրեն ծաղիկներով փոշիփոշուն, հակայական վարդենիներով հովանաւոր, բուրումներով թղզուն գրախտը եղեմական: Անոնց մուսքին՝ Սերորէներուն դունդը կ'ընդունի զիրենք, սքանչացումի ու յաղթանակի ազազակներով, ու թանկագին քարերով պարսպաւոր քաղաքի մը մէջէն զիրենք կը բերէ աստուածային Փրկչի ներկայութեան: Սպիտակահեր երիտասարդը կը թողու որ մօտենան ու համբուրեն զինքը մարտիրոսները, զորս իր տեսութիւնը կը լեցնէ անձանթ երջանկութեամբ մը: Երբեմն ան՝ իր իսկ ձեռքով կը հաղորդէ զանոնք, պատառ մը մակարդուած կաթով: Այս տեսիլներ կը յայտնէին զբախտի վայելքներն ու շքեղութիւնները այնպիսիներուն, որ եկեղեցւոյ մէջ կը լսէին անոնց կարգացուիլը, ինչպէս Աւետարանը, ու այս ընթերցումը կ'ամբարցնէր անոնց սիրտերը:

Դէթ այս խոստումները պէտք էին որ զսպէին սորսուող այն զայրոյթին, զոր կը ներշնչէր հեթանոսներուն անպթութիւնը: «Ես գիտեմ, կը գրէ սուրբ Կիպրիանոս, գիտեմ մեծ թիւ մը անոնց, որ չարիքներու և բռնութեանց ծանրութեան տակ, պիտի տենչային անմիջապէս վրէժ լուծել: Երանի թէ բան մը չընեն, վասնզի ըսած է Տէրը. սպասեցէք իմ օրուանս, ևս պիտի ժողովեմ թագաւորներն ու ազգերը և բարկութեամբս պիտի ընկճեմ զանոնք», նաև՝ «մեր վրէժը պիտի առնուի, ասոր ստուգութենէն կու գայ մեր համբուրութիւնը»:

Մարտիրոսութեան այս թեկնածունե-

րը կը տեսնուին՝ լի անսահման հաւատքով, ու խոսովայոյզ զազանի սորսափնէրով. «Մահուան հարուածը, իրենք իրենց կը մտածեն անոնք, մեծ շարիք մըն էս. կամ աւելի, անոնք ահամայ զոգահար կ'ըլլան արջի մը խեւ ծածկամտութեանց առջև նետուելու զազափարէն, բայց վագր մը, կամ յովազ մը, ընդհակառակն՝ չէր վախցնէր զիրենք: Այս քաջութիւնը, հաւատքի վկայութեան համար եռանդուն հոգիներէ զզացուած մահուան այս ծարաւը, պարտ էր երբեմն չափաւորուիլ, ու Եկեղեցին կշտամբեց զանոնք, զորս յանդուգն նախանձախնդրութեան մը զրդու մը մղած էր զրգուելու այն խոստութիւնները, զոր այլապէս առանց տկարանալու կրեցին անոնք:

Հովիւներու խօսքէն զատ, հաւատացեալներու միջև՝ Աստուծոյ հրամաններն ու խոստումները յիշեցնելու համար՝ շրջան կ'ընէին փոքրիկ ճառեր, կարճ ու ազգեցիկ ձևի մը տակ: Այս շարադրութիւններէն մի քանին հասած են մեզի. տեսակ մը մասնաւոր քրիստոնէականներ, որ ընդարձակօրէն օգտագործուած են Ս. Գրոց բնագիրները: Պատուէրներուն կցուած են Հին Ուխտի հերոսական մարտիրոսներուն օրինակները. Ետայի, Երբոյեցի երեք մանկուսնքն ի հեռոյն, Դանիէլ՝ առիւծներու մէջ, Զաքարիա. Եղիազար, Մակարեանք ու իրենց մայրը: Բաւական չէր զրելը, վասնզի բազմութիւ անուաներ պէտք ունէին խրախուսուելու. զհտնազամբաններն ալ տեսակ մը պատկերաւոր զիրքեր գարձան, միշտ յայտագրուած, հաւատացեալներուն սորվեցնելու համար Հին Օրէնքի սուրբերուն յաղթանակը:

Թրգմ. Զ. Վ.

ԽՈՐՀՈՒՐԳ ԵՒ ԽՍՐՊ

Վիճարանութեան միջ յոյրեղը երջանկութեան չի ծառայեր:



Երբ երաժշտութիւնը մեր կեանքին միջ մտնէ՝ կարեւորութիւն չունի ձայն չունենալու: Երբ միայն մեր ձայնը ցուցնելու համար երգենք՝ երգը կը ստրկանայ:



Իշխել ուզողը սուս չի վախաւար: